

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՓԱՒՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-328-11.06.2018-ՊԻՄԻ-011/1), «ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-328¹-11.06.2018-ՊԻՄԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| | Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը) | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|----|--|--|---|--|--|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | |
| 1. | ՀՀ կառավարություն | «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի 1-ին հոդված | Առաջարկվում է կրկին անգամ ապաստան հայցելու արգելքի համար նախատեսել բացառություն: | Կատարվել է համապատասխան փոփոխություն | Ընդունվել է |
| 2. | ՀՀ կառավարություն | «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի 2-րդ հոդված | Առաջարկվում է ապաստանի կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար դիմում ներկայացնելու ժամկետը սահմանել 20 օր, իսկ «օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա» բառերը փոխարինել «օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող» բառերով, քանի որ կարգավորումը պետք է տարածել ոչ միայն այն օտարերկրյա անձանց վրա, ու մասին արդեն իսկ կայացվել է հանձնման մասին որոշում, այլ նրան՝ ովքեր կալանավորվել են օտարերկրյա պետությունների իրավասու | Կատարվել է համապատասխան փոփոխություն | Ընդունվել է |

| | | | | | |
|----|-------------------|--|---|--------------------------------------|-------------|
| | | | մարմինների կողմից հետախուզման հիման վրա: | | |
| 3. | ՀՀ կառավարություն | «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի 5-րդ հոդված | Առաջարկվում է ապաստանի հայցի և փախստականի ճանաչման վերաբերյալ ընդունված որոշումների բողոքարկման ժամկետը հստակեցնել: | Կատարվել է համապատասխան փոփոխություն | Ընդունվել է |
| 4. | ՀՀ կառավարություն | «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի 6-րդ հոդված | Առաջարկվում է սույն օրենքի գործողությունը տարածել դրա ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված դիմումներով գործի քննության վրա: | Կատարվել է համապատասխան փոփոխություն | Ընդունվել է |
| 5. | ՀՀ կառավարություն | «Վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված | Առաջարկվում է նոր լրացվող 31.4-րդ գլխում. 1. Վերնագրից և բովանդակությունից հանել «ազատությունը սահմանափակված կամ ազատությունից զրկված» բառերը, 2. 222.12-րդ հոդվածի 2-րդ մասը հանել, 3. 222.14-րդ հոդվածը վերախմբագրել, հստակեցնելով վերաքննիչ և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու, բողոքին պատասխան ներկայացնելու, որոշումն օրինական ուժի մեջ | Կատարվել է համապատասխան փոփոխություն | Ընդունվել է |

| | | | | | |
|----|-------------------|--|---|------------|-------------|
| | | | մտնելու ժամկետները: | | |
| 6. | ՀՀ կառավարություն | «Վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ և 3-րդ հոդված | Առաջարկվում է հանել Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածները: | Կատարվել է | Ընդունվել է |
| 7. | ՀՀ կառավարություն | «Վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված | Առաջարկվում է սույն օրենքի գործողությունը տարածել դրա ուժի մեջ մտնելուց հետո հարուցված գործերի քննության վրա: | Կատարվել է | Ընդունվել է |